ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (ՀՆՀ)

Ամսաթիվը՝ 26 փետրվարի, 2016թ.

Պայմանագիր՝ EE-CW-53/2016-1, EE-CW-53/2016-2
ԳԲՄ դրամաշնորհ NTF 012163

Համաշխարհային բանկի ծրագրի անունը՝

Էներգախնայողության ծրագիր

Սույն հրավերը հաջորդում է սույն ծրագրի համար հրապարակված Ծրագրի Գնումների ընդհանուր ծանուցմանը, որը զետեղվել է **"UN Development Business (UNDB) online"** համացանցում 2012թ. հունիսի 30-ին:

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից /Գլոբալ բնապահպանական հիմնադրամի միջոցներով/ ստացել է դրամաշնորհ Էներգախնայողության ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը հանրային օբյեկտներում էներգախնայողության ներդրումների անհրաժեշտ վճարումները կատարելու համար:
2. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը հրավիրում է ներկայացնել հայտեր հետևյալ հանրային օբյեկտում էներգախնայողության միջոցառումների իրականացման համար.

Լոտ 1. <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի էներգախնայողության միջոցառումների իրականացում, EE-CW-53/2016-1
Լոտ 2. Սպիտակի քաղաքապետարանի էներգախնայողության միջոցառումների իրականացում, EE-CW-53/2016-2

Հայտատուները կարող են ներկայացնել հայտ մեկ լոտի, կամ ցանկացած երկու լոտի համար: Հայտերը կգնահատվեն յուրաքանչյուր լոտի համար առանձին, հետևաբար մեկից ավելի լոտի համար հայտ ներկայացնելու դեպքում, յուրաքանչյուր լոտի համար պետք է լրացվի առանձին Կապալառուի հայտ և ներկայացվի: Յուրաքանչյուր լոտի համար առանձին կարող է առաջարկվել զեղչ /եթե այդպիսիք կլինեն/: Հայտը գնահատելու ընթացքում երկու լոտերի կոմբինացված զեղչը հաշվի չի առնվի: Յուրաքանչյուր լոտի համար կկնքվի մեկ պայմանագիր:

3. Հետաքրքրություն ունեցող կազմակերպությունները կարող են ստանալ մրցութային փաթեթը Հիմնադրամից /Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0019, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն/:
Հիմնադրամը կհրավիրի նախամրցութային ժողով **2016թ. մարտի 11-ին, ժամը 15:00-ին:** Այդ ժողովի ընթացքում Պատվիրատուն կնկարագրի Մրցութային հայտերի նախապատրաստման, ներկայացման և գնահատման գործընթացները, ինչպես նաև Էներգախնայողության միջոցառումների առաջարկները /ԷԽՄԱ/, կպարզաբանի էներգախնայողական միջոցառումների նախապատրաստման հետ կապված Հայտատուների կողմից բարձրացված հարցերը: Նախամրցութային ժողովին չներկայալը չի կարող հանդիսանալ հայտի մերժման պատճառ:

4. Հայտերը պետք է ուժի մեջ լինեն Հայտը բացելուց հետո 90 օրվա ընթացքում և ուղեկցվեն **Հայտի երաշխիքով**, ստորև նշված գումարով, **կամ Հայտի ապահովման հայտարարագրով:**

Լոտ 1. <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի էներգախնայողության միջոցառումների իրականացում, EE-CW-53/2016-1՝ 300.000 ՀՀԴ
Լոտ 2. Սպիտակի քաղաքապետարանի էներգախնայողության միջոցառումների իրականացում, EE-CW-53/2016-2՝ 500.000 ՀՀԴ

Յուրաքանչյուր լոտի համար պետք է ներկայացվի առանձին հայտի երաշխիք, կամ Հայտի ապահովման հայտարարագիր:

5. Մրցույթը կիրականացվի Համաշխարհային բանկի՝ Ուղեցույցներ. ՎԶՄԲ վարկերի և ԶՄԱ փոխառությունների և դրամաշնորհների միջոցներով Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ 2011թ. հունվար սահմանված ընթացակարգերով՝ Ազգային Մրցակցային Սակարկության եղանակով /նախագծում, շինարարական աշխատանքներ, չափում և հավաստում, շահագործում և պահպանում/:

Որակավորման չափանիշները ներառում են.

- Հաջողակ Հայտատուի կողմից վերջին երեք (3) տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը պետք է կազմի՝
  Լոտ 1. 90.000.000 ՀՀԴ
  Լոտ 2. 112.500.000 ՀՀԴ

- Գլխավոր կապալառուի փորձ վերջին 5 տարիների ընթացքում /յուրաքանչյուր լոտի համար/ նմանատիպ ծավալի, բնույթի և բարդության աշխատանքների նվազագույնը երկու պայմանագիր /այս պահանջին համապատասխանելու համար աշխատանքները պետք է 70 տոկոսով ավարտված լինեն/:
  Լոտ 1. 10.500.000 ՀՀԴ
  Լոտ 2. 17.500.000 ՀՀԴ

- Շրջանառու ֆինանսական միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ, այլ պայմանագրային պարտավորություններով չծանրաբեռնված՝
  Լոտ 1. 5.000.000 ՀՀԴ
  Լոտ 2. 6.250.000 ՀՀԴ

Երբ հայտը ներկայացվում է մեկից ավելի լոտի համար, Հայտատուները պետք է բավարարեն համապատասխան լոտերի գումարային ընդհանուր պահանջներին, որ բավարարեն որակավորմանը և շնորհվեն մեկից ավելի պայմանագրով /պայմանագիր/:

6. Շահագրգիռ և իրավասու հայտատուները կարող են ստանալ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրել դրանք բոլոր աշխատանքային օրերին /բացի շաբաթ և կիրակի օրերից/ ժամը 09:00-ից մինչև 18:00 Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամում:

Հայտերը պետք է ներկայացվեն **Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ,** մինչև **2016թ. մարտի 25-ը, ժամը 15:00**:

Էլեկտրոնային եղանակով մրցութային հայտերի ներկայացում չի թույլատրվում: Հայտերը կբացվեն մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ:

7.Ուշացած հայտերը կմերժվեն և կվերադարձվեն փակ վիճակում հայտատուներին:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և
էներգախնայողության հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0019, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն,
Հեռ/Ֆաքս: + /374 10/ 588-011
Էլ. Փոստ: g.zara@r2e2.am
Ինտերնետային հասցե: www.r2e2.am